## ԻԲՆ ՌՈՒՍՏԱ (մահ. 913-ից հետո )

*Աբու Ալի Ահմադ իբն Օմար Իբն Ռուստան, ծագումով պարսիկ, ծնվել է Իսֆահանում և իր կյանքի մեծ մասն անցկացրել այնտեղ, այցելել է Հիջազում հավանաբար 903-ին: Նրա «Ալ-Ալակ ալ-Նաֆիսա» (Գիրք թանկագին արժեքների) մեծ հանրագիտարանից պահպանվել է միայն 7-րդ հատորը նվիրված աստղաբաշխությանն ու աշխարհագրությանը: Այս գործը ամենայն հավանականությամբ ստեղծվել է 903-913 թվականների միջև: Նա իր երկը սկսում է տիեզերագիտական շատ լուրջ մի ակնարկով, այնուհետև մանրամասնորեն նկարագրում է Մեքքայի ու Մադինայի սրբավայրերը, ապա ընդհանուր տեղեկություններ է փոխանցում ծովերի, գետերի, կլիմաների, մեծ քաղաքների մասին, նկարագրում է Կոստանդնուպոլիսը, խազարներին, բուլղարներին, սլավոններին, ռուսներին և այլ ժողովուրդների: Հատորն ավարտում է երթուղիների մի ցանկով: Ընդհանրապես սա մի գիրք է, որտեղ կարելի է գտնել ինչպես իսլամի տիրապետության տակ գտնվող, այնպես էլ նրանից դուրս գտնվող երկրների ու ժողովուրդների մասին մանրամասն տեղեկություններ: Իր աշխատանքում Իբն Ռուստան հավանաբար օգտվել է ալ-Ջայհանիի և Իբն Խորդադբեհի երկերից:*

***Ներկա թարգմանությունը կատարված է Bibliotheca Geographorum Arabicorum, edidit M. J. de Goeje, VII, Lugduni Batavorum, 1967.***

***(Крачковский, IV, стр. 159-160, R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 32-33, Ibn Rusta, S. Maqbul Ahmad, EOI, CD-ROM, (III: 920a)).***

***Տե՛ս նաև.***

- Bibliotheca Geographorum Arabicorum, VII, 1892.
- G. Wiet, Les Atours Precieux , Caire, 1955, Vol. 1